01/10.1/5779-09
2009-09-02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Սամվել Նիկոյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

Հայաստանի Հանրապետության կառավարությունը կիսում է հեղինակի մտահոգությունը և կարևորում օրենքն ուժի մեջ մտնելուց հետո համապատասխան մարմինների կողմից օրենքի այս կամ այն դրույթի, նորմի կիրառման կարգն ապահովող այլ իրավական ակտերի ժամանակին ընդունման անհրաժեշտությունը։ Սակայն գտնում ենք, որ օրենքում նախատեսված նորմի պահանջի կատարումն ապահովող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման համար օրենքի նախագծով նախատեսվող երեք ամիս ժամկետի սահմանումը չի կարող ամբողջությամբ լուծել խնդիրը։

Այսօր այդ խնդիրը մասամբ կարգավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նորմատիվ որոշման, Հայաստանի Հանրապետության

միջազգային պայմանագրի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N 541-Ն որոշմամբ։ Այժմ Հայաստանի Հանրապետության կառավարությունում վերանայվում են այն բոլոր օրենքները, որոնց այս կամ այն դրույթները կամ նորմերը չեն գործում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի բացակայության պատճառով։ Միայն աշխատանքների ավարտից հետո՝ բացահայտված վիճակի և դասակարգված պատճառների վերլուծության արդյունքում հնարավոր կլինի խնդրին տալ համապարփակ լուծում։

Հարկ ենք համարում նկատի ունենալ նաև այն, որ՝

1) խոսքը պետք է վերաբերի ընդհանրապես ցանկացած իրավական ակտի.

2) իրավական ակտով նախատեսված որոշ նորմեր «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն կարող են ուժի մեջ մտնել ավելի ուշ, քան տվյալ իրավական ակտը։

Ելնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին առաջարկում է առայժմ ձեռնպահ մնալ ներկայացված նախագծի քննարկումից, իսկ հեղինակին՝ համագործակցել Հայաստանի Հանրապետության կառավարության հետ՝ առկա խնդրի օրենսդրական համապարփակ լուծման մշակման գործում։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ

Պ-679-31.07.2009-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-320 օրենքի 68-րդ հոդվածը լրացնել նոր 3.1.-րդ մասով.

«3.1. Եթե օրենքում նախատեսված նորմի պահանջի կատարումը կարող է իրականացվել կամ ուղղակիորեն պայմանավորված է այդ օրենքով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունմամբ, ապա Հայաստանի Հանրապետության կառավարությունը կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը պարտավոր է համապատասխան իրավական ակտն ընդունել օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից երեք ամսվա ընթացքում, եթե այդ օրենքով այլ ժամկետ նախատեսված չէ։»։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից։

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման վերաբերյալ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմա-նավորված է այն հանգամանքով, որ հաճախ որեւէ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, որով նա-խատեսվում են նաեւ ընդունել այլ իրավական ակտեր (օրինակ՝ օրենքի այս կամ այն դրույթի (նորմի) կիրառման կարգ), համապատասխան մարմինների կողմից դրանք չեն ընդունվում կամ ընդունվում են բավականին ուշ կամ որեւէ լուրջ միջադեպից հետո, իսկ այդ ընթացքում օրենքի դրույթների կիրարկումը դառնում է անհնարին՝ տեղի տալով կոռուպցիոն կամ անցանկալի տարբեր երեւույթների։

Այս կապակցությամբ, սույն նախագծի ընդունումը նպատակ ունի հստակ ժամկետներ սահմանել այն իրավական ակտերի ընդունման համար, որոնց ընդունումը նախատեսվում է այս կամ այն

օրենքով։ Ներկայացված նախագծով այդպիսի ժամկետ է առաջարկվում օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսյա ժամկետը, եթե այդ օրենքով այլ ժամկետ նախատեսված չէ։ Առաջարկվող լրացման ընդունումը հնարավորություն կտա օրենքները կիրարկել լիարժեք եւ լրիվ՝ ապահովելով այս կամ այն հարցի իրավական կարգավորման համալիրությունը։